ԿԱՐԾԻՔ

ՌՈՒԶԱՆՆԱ ԳՈՒՐԳԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆԻ

<<ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ>> ՎԵՐՆԱԳՐՈՎ

ԺԳ.00.01 -<<ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ժամանակակից մարտահրավերներների պայմաններում, որտեղ զգալի աճել են անվտանգության վրա ազդող գործոնները, և հասարակությունում անվտանգության երաշխիքները այլևս չեն կապվում միայն կոնկրետ գերատեսչությունների գործառույթների հետ, այլև յուրաքանչյուր անձի գիտակցության և պատրաստվածության հետ: Հասարակությունում անվտանգ վարքագծի ձևավորման հիմնախնդիրն առավել արդիական է մեր հասարակությունում, որտեղ կան մշտական սպառնալիքներ՝ պայմանավորված ամենատարբեր ռիսկերով ու հանգամանքներով: Անվտանգ վարքագծի ձևավորման լայն հնարավորություններ ունի հատկապես հանրակրթությունը, որտեղ մուտք ունեն բոլոր երեխաները, և կարող են կիրառվել մանկավարժական անհրաժեշտ տեխնոլոգիաներ անվտանգության մշակույթի հաստատման ու զարգացման նպատակով:

Հենց նման հրատապ լուծում պահանջող հիմնախնդրի լուծմանն է ուղղված Ռուզաննա Գուրգենի Ղարիբյանի <<Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները>> վերնագրով թեկնածուական ատենախոսությունը:

Ուսումնասիրելով երեք գլխից բաղկացած ներկայացված աշխատանքը՝ ներկայացնենք դրա շրջանակներում իրականացրած հետազոտության արդյունքում կատարված վերլուծությունների գիտական նշանակությունները, ինչպես նաև մեր առաջարկությունները:

Աշխատանքի կառուցվածքային պահանջներից ելնելով, ներածության մեջ ներկայացված է հետազոտության թեմայի արդիականության, հիմնախնդրի, նպատակի, խնդիրների, գիտական նորույթի, պաշտպանության ներկայացվող դրույթների ձևակերպումները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունները, աշխատանքի ծավալն ու կառուցվածքը: Այնուհետև շարադրվել են աշխատանքի երեք գլուխները, ինչպես նաև հետազոտության արդյունքում դուրս բերված եզրակացությունները, օգտագործված գրականության ցանկը և հավելվածները:

Աշխատանքի գլուխների շարադրանքում հետազոտության տեսական և գիտամեթոդական հիմունքները ներկայացնելով, հետազոտողը վերլուծել է արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները: Վեր են հանվել նպատակի ձևակերպման մեջ կիրառված հիմնական հասկացությունների գոյություն ունեցող ձևակերպումներն ու սահմանումները: Ներկայացվել է արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացումը՝ որպես սոցիալ-մանկավարժական գործընթաց: Ուսումնասիրվել և ներկայացվել է արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացի նպատակը, բովանդակությունը, միջոցները և չափանիշները:

Հետաքրքրական է հատկապես անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների առանձնահատկությունների քննարկումը: Դիտարկվել է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցականների անվտանգության մշակույթի զարգացման գործընթացում և անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաներն արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման գործընթացում:

Փորձարարական ստուգման է ենթարկվել արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը՝ վերլուծելով և ներկայացնելով փորձարարական ստուգման արդյունքները:

Ուսումնասիրելով ներկայացված աշխատանքը՝ նշենք, որ այն ինքնուրույն գիտական հետազոտություն է, որը պարունակում է գիտական նորույթ, ակնհայտ է հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը: Այնուամենայնիվ ուզում ենք ներկայացնել որոշ նկատառումներ հետազոտության վերաբերյալ.

1. Հետազոտության նպատակի ձևակերպման մեջ մասնավորեցվում են դպրոցականների կրտսեր, միջին ու ավագ խմբերը, և նշվում է, որ կմշակվեն <<անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները և դրանց կիրառման ուղիները>>: Քանի որ այդ տեխնոլոգիաների և ուղիների մշակումն աշխատանքում ներկայացված չէ ըստ դպրոցականների խմբերի հետ տարվող աշխատանքների, կարծում ենք կարիք չկար նպատակի սահմանման մեջ նման մասնավորեցում տալ, հատկապես, որ աշխատանքի որևէ բաժնում չի ներկայացվում նպատակի սահմանման մեջ մասնավորեցված խմբերի հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները: Դրա արդյունքում էլ աշխատանքից դուրս են մնացել կիրառված հասկացությունների դիտարկումները:
2. Պաշտպանության ներկայացվող 1-ին, 3-րդ և 4-րդ դրույթները, որոնք փաստարկում են, որ անվտանգության մշակույթի զարգացումը <<...պահանջ է>>, <<կարևոր է...>> և <<...անհրաժեշտություն է>>, կարելի էր միավորել և ներկայացնել որպես մեկ դրույթ:
3. Աշխատանքի առաջին խնդրի ձևակերպման մեջ նշվում է, որ խնդիր է դրվել <<ուսումնասիրել զարգացած երկրների կրթական ծրագրերի կատարելագործման ու կրթական ծրագրերի մշակման գործընթացում դպրոցականների անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման հիմնախնդիրների ներառման փորձը>>, սակայն աշխատանքում առանձին ներկայացված չէ նման փորձի վերլուծություն՝ բացառությամբ մի քանի մասնավոր դիտարկումների:
4. Աշխատանքի բովանդակության 1.3 և 2.1 կետերի ձևակերպման մեջ կա կրկնություն <<չափանիշներ>>-ի մասով: Երկու տեղում էլ նշված են չափանիշները:
5. Ներկայացնելով իր կողմից իրականացրած հարցազրույցներն ու սոցիոլոգիական հարցումները, հետազոտողը բավարարվել է միայն դրանց նկարագրությամբ ու թվարկմամբ, սակայն լավ կլիներ, որ ներկայացվեր, թե ինչպես է ընտրել հարցվողներին, ինչպես է որոշել, թե ինչ քանակությամբ հարցվողներ պետք է մասնակցեն հետազոտությանը և ինչու է ընտրել հենց այդ հարցվողներին, այսինքն՝ նշված չեն ընտրանքի հիմքերն ու համակազմը, ինչպես նաև ներկայացուցչականության ապահովման հանգամանքները: Ներկայացված չեն նաև այն չափանիշներ, որոնցով ստուգել և ներկայացրել է հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հուսալիությունը:

6. Հետազոտության արդյունքների ամփոփումը սահմանափակվել է միայն մաթեմատիկական աղյուսակների ներկայացմամբ, լավ կլիներ, որ դրանք պատկերավոր ներկայացվեին նաև գծապատկերների տեսքով:
7. Եզրակացության 2-րդ կետը երկարաշունչ է և պարզ չէ, թե ո՞րն է ամփոփիչ պնդումը:

Սակայն արված նկատառումները ստվեր չեն գցում աշխատանքի գիտական որակի վրա:

Ամփոփելով մեր խոսքը նշենք, որ Ռուզաննա Գուրգենի Ղարիբյանի <<Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները>> վերնագրով ԺԳ.00.01 - <<Մանկավարժության տեսություն և պատմություն>> մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում ՀՀ Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի իր հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Մանկ.գիտ. թեկնածու Ա. Ս. Ալեքսանյան

Ա. Ս. Ալեքսանյանի ստորագրությունը
հաստատում եմ՝
Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար՝ Լ. Հովսեփյան

17.11.2021